ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 23.11.1999

- Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ
- Գլուխ 2. Պետական կառավարման մարմինների իրավասություններն աշխարհագրական անվանումների բնագավառում
- Գլուխ 3. Աշխարհագրական անվանումների բնագավառի պետական կարգավորումը
- Գլուխ 4. Պատասխանատվությունն աշխարհագրական անվանումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը խախտելու համար
- Գլուխ 5. Եզրափակիչ դրույթ

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի նպատակները

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության

աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների եւ անվանափոխումների, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության պատմամշակութային ժառանգության մասը կազմող աշխարհագրական անվանումների կանոնավորման, միօրինակացման, օգտագործման, հաշվառման եւ պահպանության իրավական հիմքերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված դեպքերի:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործված են հետեւյալ հիմնական հասկացությունները.

ա) աշխարհագրական օբյեկտ՝ աշխարհագրական որոշակի դիրքով ամբողջական եւ համեմատաբար կայուն կազմավորում, որն ունի բնական կամ արհեստական ծագում:

Աշխարհագրական օբյեկտներ են՝

- մայր ցամաքները, աշխարհամասերը, օվկիանոսները, ծովերը, լեռները, գետերը, լճերը, դաշտավայրերը, բարձրավանդակները եւ այլ ֆիզիկաաշխարհագրական օբյեկտները,

- պետությունները, դրանց վարչատարածքային միավորները եւ գործառական տարածքները,

- երկաթուղային կայարանները, օդանավակայանները, ջրամբարները, ջրանցքները եւ այլ ինժեներատեխնիկական կառույցներ,

- փողոցները, հրապարակները, պուրակները, զբոսայգիները եւ այլ ներբնակավայրային օբյեկտները.

բ) աշխարհագրական օբյեկտի անվանում (աշխարհագրական անվանում)՝ աշխարհագրական օբյեկտը ճանաչելու եւ առանձնացնելու նպատակով տրվող հատուկ անուն.

գ) աշխարհագրական օբյեկտի անվան կանոնավորում՝ աշխարհագրական անվանումների ոլորտի օրենսդրությանը եւ կիրառման ավանդույթներին համապատասխան աշխարհագրական անվան ու դրա գրելաձեւի որոշում.

դ) աշխարհագրական անվանումների պետական քարտադարան՝ որեւէ պետության տարածքի աշխարհագրական անվանումների համահավաք՝ բազային համարվող տեղագրական քարտեզներում արտահայտված աշխարհագրական անվանումների ծավալով.

ե) աշխարհագրական անվանումների ազգային տեղեկատվական բանկ՝ որոշակի սկզբունքներով ստեղծված աշխարհագրական անվանումների ֆոնդ:

Հոդված 3. Աշխարհագրական օբյեկտների անվանումների բացահայտումը

Աշխարհագրական օբյեկտների անվանումները բացահայտվում են քարտեզների, տպագիր կամ ձեռագիր աղբյուրների վերլուծության, տեղացիների, մասնագետների տեղեկատվության, հարցումների եւ այլ աղբյուրների միջոցով:

Հոդված 4. Հայաստանի Հանրապետության տարածքի աշխարհագրական օբյեկտների անվանակոչումը

1. Անվանումները տրվում են՝

ա) Հայաստանի Հանրապետության նոր ստեղծված վարչատարածքային միավորներին, բնակավայրերին եւ գործառական տարածքներին.

բ) Հայաստանի Հանրապետության անանուն աշխարհագրական օբյեկտներին:

2. Հայաստանի Հանրապետության աշխարհագրական օբյեկտների անվանակոչումը կատարվում է՝ տվյալ վայրի աշխարհագրական, պատմական, մշակութային, ազգագրական, կենցաղային եւ այլ տեղական պայմանները հաշվի առնելով:

Աշխարհագրական անվանումը պետք է ունենա բառակազմական մեծ հնարավորություն, լինի բարեհունչ:

3. Հայաստանի Հանրապետության աշխարհագրական օբյեկտներին կարող են տրվել դրանց հայտնաբերման, ուսումնասիրման, յուրացման կամ հիմնադրման գործում մեծ ավանդ ներդրած առանձին անհատների անունները:

Տվյալ աշխարհագրական օբյեկտի հետ առնչություն չունեցող նշանավոր պետական, հասարակական, զինվորական գործիչների, գիտության եւ մշակույթի ներկայացուցիչների, այլ նշանավոր անհատների անունով կարող են անվանակոչվել անանուն աշխարհագրական օբյեկտները:

4. Չի թույլատրվում անանուն աշխարհագրական օբյեկտներին շնորհել նույնատեսակ օբյեկտների անվանումները կրկնող անուններ:

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության տարածքի աշխարհագրական օբյեկտների անվանափոխումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքի աշխարհագրական օբյեկտների անվանափոխում թույլատրվում է՝

ա) առանձին օբյեկտների պատմական անունները վերականգնելիս.

բ) օտար, անբարեհունչ եւ կրկնվող անունները վերացնելիս.

գ) աշխարհագրական անունները կանոնավորելիս:

2. Հայաստանի Հանրապետության տարածքի աշխարհագրական օբյեկտների անվանափոխումները պետք է բավարարեն սույն օրենքի 4 հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերի պահանջներին:

Հոդված 6. Աշխարհագրական օբյեկտների անվանակոչման եւ անվանափոխման կարգը

1. Աշխարհագրական օբյեկտների անվանակոչման կամ անվանափոխման մասին առաջարկություններ կարող են անել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները, իրավաբանական ու ֆիզիկական անձինք:

2. Ըստ աշխարհագրական օբյեկտների գտնվելու տեղի՝ առաջարկությունները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետներին:

3. Հայաստանի Հանրապետության մարզպետները մեկամսյա ժամկետում քննում են աշխարհագրական օբյեկտների անվանակոչման կամ անվանափոխման մասին առաջարկություններն ու դրանք հիմնավորող փաստաթղթերը եւ իրենց եզրակացությունն են ներկայացնում աշխարհագրական անվանումների բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին՝ կցելով անվանափոխման կամ անվանակոչման հետ կապված ծախսերի նախահաշիվը:

4. Աշխարհագրական անվանումների բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության ստեղծած մասնագիտական հանձնաժողովի հետ ուսումնասիրում է աշխարհագրական օբյեկտների անվանակոչման կամ անվանափոխման մասին առաջարկությունները: Դրական կարծիքի դեպքում սահմանված կարգով դրանք ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ որոշում կայացնելու համար:

Հոդված 7. Աշխարհագրական օբյեկտների անվանումների լեզուն

1. Հայաստանի Հանրապետության աշխարհագրական օբյեկտների անվանումները տրվում են հայոց լեզվով:

2. Միջազգային օգտագործման համար նախատեսված փաստաթղթերում, քարտեզներում եւ այլ նյութերում Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումները փոխանցվում են լատիներեն այբուբենի տառերով՝ նորմատիվ - տեխնիկական փաստաթղթերի համաձայն:

Հոդված 8. Աշխարհագրական օբյեկտների անվանումների կանոնավորումը

1. Հայոց լեզվով աշխարհագրական օբյեկտների հայերեն եւ օտարալեզու անվանումների կանոնավորված գրելաձեւը որոշվում է օրենքների, այլ իրավական ակտերի, նորմատիվ - տեխնիկական փաստաթղթերի պահանջներին եւ կիրառման ավանդույթներին համապատասխան:

2. Աշխարհագրական անվանումների կանոնավորումը կատարվում է գործող նորմատիվ - տեխնիկական փաստաթղթերի պահանջների համաձայն:

Հոդված 9. Աշխարհագրական անվանումների գրանցումը եւ հաշվառումը

1. Հայաստանի Հանրապետության աշխարհագրական օբյեկտների անվանումները ենթակա են պարտադիր գրանցման եւ հաշվառման: Աշխարհագրական օբյեկտների գրանցման եւ հաշվառման տվյալների հիման վրա ստեղծվում է Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանը:

Սպառողներին Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների մասին պաշտոնական տեղեկատվությամբ ապահովելու համար աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի տվյալների հիման վրա պարբերաբար հրատարակվում է (են) Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատու (գազետիր), ընդհանուր ու թեմատիկ բառարաններ, այլ տեղեկատուներ եւ ցանկեր:

2. Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների գրանցման եւ հաշվառման, ինչպես նաեւ աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի ստեղծման ու վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ԳԼՈՒԽ 2.

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հոդված 10. Աշխարհագրական անվանումների բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) ապահովում է աշխարհագրական անվանումների բնագավառում պետական քաղաքականության իրականացումը.

բ) որոշումներ է կայացնում Հայաստանի Հանրապետության տարածքի աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների եւ անվանափոխումների մասին, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված դեպքերի.